



# U. S. P. L. S.

ԲԻՒ Թ. — ՏՐՁԱՆ ԻԱ. 1888 ՏԱՐԻ ԻԱ. ՍԿՂՏԵՄ. 30

ԿՐՈՆԱԿԱՆ

ԵՐԿՐԻՄ ԲՆԱԿԻՉՆԵՐՆ ՈՒ ՆՈՑԱ ԿՐՈՆՆԵՐՆ.

Առաջին մասն. Իմաստ. Սովոր. ԺԵ. 3:

Ո՞վ է մեր պաշտելի Արարիչն, որին որ մենք ամենայն սրտով  
սիրում ենք: — Քո մոռածմունքովիդ կարող ես սաւառնել ամե-  
նայն բարձր տեղերը, բայց նորա փառքը մոռքովիդ բմբռնել քեզ  
չէ տուած. միայն քո սիրուդ շատ շուտ հասկանում է, որ նա  
քո Հայրդ է ու դու նորա դաւակն:

Ի՞նչ է անում ամենայն սրտով սիրած մեր Ստեղծող Աստուածը: Մարգար երազած իմաստութիւնից անհամեմատ բարձր ու

տարբեր կերպով միշտ գործում է ու ստեղծում աշխարհիս այեն տեղերում։ բայց և այնպէս հայրաբար ինսամք ունի ամենափր մի արարածի վերայ անդամ, և հզօր ձեռքովն առաջնորդում է ինձ ու քեզ։

**Աստուած հետո՝ և այդեօտ մեզանից։**

Երկինքը կամարի նման պատում է երկիրս հեռուներում։ աստղերից վերևումը նորա Հոգին աստուածային բարերար իշխանութեամք կառավարում է միշտ և յաւիտեան։ բայց և մօտ է քեզ, երբ որ դու նորան պտուում ես, և ամենայետին աղքատիցն անդամ հեռու չէ իւր անշափ ողորմութիւնովն։

Ո՞Չ է Աստուած։ Պատմում են թէ՝ հին ժամանակի մի թագւոր այս հարցումն է արել իւր տէրութեան մէջ գտնուած ամենագիտուն մարդուն։ «Այդ հարցմունքիդ պատասխանն այս րոպէիս տալ չեմ կարող, պատասխանել է գիտնականն։ մի օր ժամանակ տուր ինձ մուածելու»։ Երբ որ այդ օրն անց է կացել, եկել է նա թագաւորի մօտ՝ ու ասել. «Քեզանից շատ կարճ ժամանակ ուզեցի։ Մի շաբաթ ժամանակ տուր ինձ մը-տածելու»։ Այդ շաբաթն էլ անց կենալուց յետոյ, մի ամիս ժամանակ է ուզել. յետոյ էլ մի տարի։ և երբ որ տարին էլ անց է կացել, խստովանուել է իմաստունն, որ էլի դեռ չէ կարողացել անքննելի էակին քննել։ ասել է թէ՝ հողեղէն մարդուս բոլոր կեանքն էլ շատ քիչ է, որ Աստուածոյ էութիւնը ճանաչենք։

Ո՞Չ է Աստուած։ Այս հարցումն զբաղեցրել է ամեն ժամանակի մէջ ապրած ամենահիմաստուն մարդոց, և իրանց այդ երկար ու խոր մնածմանց մէջ, միշտ տեսել են ու հասկացել, որ իրանց մարդկային սահմանաւոր խելքի բանը չէ, որչափ էլ սուր ու թափանցող լինին շատ բանի մէջ, ու կարծեն թէ՝ բան չկայ, որ իրանց ունեցած խելքովն ու իմաստութեամք չկարողանան քննել ու հասկանալ, կամ իրանց համար մութ ու անբացատրելի մնայ։ Բայց մենք, որ մեր զբացմունքներից կապուած, կաշկանդուած ենք, ինչպէս կարող ենք աներևոյթ էակին աեսնել։ Ի՞նչպէս կարելի է, որ մենք, որ ամեն բան մեր մարդկային խելքի չափովն ենք միայն չափում, հասկանանք մեր

ստեղծողին, որ մեր խելքից ու մտքից վեր է: որ տեղից ու ժամանակից շատ ուշ շատ բարձր է: Աստուած բնակուած է լուսի մէջ, որին մարդ մօտենալ չէ՝ կտրող: Հասկանում ենք միայն այս լուսի մեզ համար բացուիլն և ըմբռնում ենք, որ սկսում է լուսանալ ու լուսաւորել:

Բայց մեր Փրկիչն Յիսուս մեղ մի ճանապարհ է ցոյց տուել, որ ամենասուր խելքի ջան ու ճիգն բանեցնելուց աւելի ապահով կերպով տանում է մեզ՝ մեր Ստեղծողին ու Աստծուն հոգեով տեսնելու, ուզում եմ ասել թէ՝ Աստուծուն տեսնել կարող է, Տադու-ը հանչին: Յիսուս Քրիստոս չարվեցրեց մեղ խորը ճանել մեր մոռքովը փիլիսոփայական մտածմունքների մէջ, որ իմանանք Աստուծոյ էութիւնն, այն անիմանալի է ութիւնն, որ անուս ու տգէտ մարդոց մեծ մասին չէր կարող հասցնել իրանց ցանկութեանը՝ հասկանալու այն, ինչի վրայ որ մտածում էր ժողովրդի այդ դասակարգն և ուզում էր հասկանալ. բայց և լուսաւորուած ու գիտնական մարդուն էլ չէր կարող երբէք գոհացուցիչ կերպով իւր մտածած ու ցանկացած նպատակին հասցնել. այլ նա սորվեցնում էր պարզ հասկանալի կերպով թէ ինչպէս Աստուած ամեն օր իրան յայտնում է մարդկային սրտին, որպէս զի մեր մարդկային սիրտն՝ այս ճանաչողութեամբն՝ ինքն էլ Աստուածային լինի: Հանչի է Աստուած, Աստուած: Հայր է, Փրկիչ մեզ աւանդած. ուսման գիտաւոր խօսքերը սրանք են, Յիսուս Քրիստոսի վարդապետութեան ուղ և ծուծն՝ իսկական միջուկն այս է: Եթէ որ մենք այդ հաւատն ունենանք և այդ լինի մեր հաւատն՝ իբրև մեզ իւրացրած և սեպհականացրած մի անգին գանձ, որ մեր ներքին կեանքի միջուկն լինի, այն ժամանակ մենք կստանանք այդ մեր ունեցած հաւատից օրհնութիւն ու զօրութիւն և երանելի միսիթարութիւն՝ թէ մեր կեանքի մէջ և թէ մեր մահուան ժամանակ:

Աստուծոյ այլ և այլ կերպով յայտնութիւր մարդկային ազգին՝ շատ հին ժամանակիներից է, ապացոյց կարող է լինել այն, որ ոչ մի ազգ չէ եղել երբէք աշխարհում, որ առանց կրօնի ապրած լինի: Բայց Քրիստոս Աստուածային յայտնութիւներն ոչ միայն ամենապարզ կերպով մեզ յայտնեց ու բացատրեց, այլ և իւր խօսքովն, իւր կեանքովն և իւր Փրկչական մահովն ևս վերածեց ամենաբեղնաւոր բարոյական զօրութեան բոլոր մարդկային

սեռի համար:

Արդէն ուրիշ տեղեր մեր արած խորհրդածութիւններով ցոյց ենք տուել, թէ ինչպէս Աստուածային յայտնութիւնը բնութեան մէջ տանում է Քրիստոնէին ամենաջերմեռանդ խոնարհութեան ու շնորհակալութեան դէպի լւը Ստեղծողը: Սուրբ բնութեան մէջ մնաք էլ աւելի սուրբ ենք լինում, երկրպագելով Աստուածոյ զօրութեան ու իմաստութեան, որ ամենայն տեղ շատ փառաւոր կերպով յայտնվում է: — Հետեւեալ թերթերի մէջ կաշխատենք ցոյց տալ թէ՞ ինչպէս նոյնանման կերպով մեծ ու զարմանալի է Աստուածոյ աւաշնորդութիւնն ու կառավարութիւնը ճաշճային առջէ պատճումէան մէջ: Մեր խորհրդածութիւնները առարկան լինի հէնց ինքն հողեղէն՝ մահկանացու մարդն՝ իւր արած գործերովն ու կրածներով, իւր արած սխալներովը, մոլորութիւններով՝ նոյնպէս և իւր մշտական՝ անվերջ փափագովն, որով բարի և յաւիտենական բանի ետելիցն է ընկնում: Ինչպէս ամեն մի մարդու՝ նոյնպէս և ամբողջ ազգերի մէջ մղող ամենամեծ գորութիւնն՝ ոչ թէ մեր ազատ կամքն է, և ոչ թէ մի անբացատրելի ու մութ ճակատագիր, որ կուրօրէն տալիս է մեզ ու յետ առնում իւր տուածն, այլ մի գերագոյն զօրութիւն, ուզումեմ ասել՝ վերին տեսչութիւնն է: որ ամեն բան կառավարում է որոշ և գիտակից ծրագրով:

Աստուածոյ կառավարութիւնը ճանաչումենք ամեն բանից առաջ նորանից որ նա իրան յայտնուիլը մեզ մեր կեանքի մէջ կամիւր յայտնութիւնը դրել է մեր իսկ սրտի մէջ: Ու մի ճարդ, ու մի առջ նէայ, որ ի-ը սրտի մէջը կէլ Աստուածային գիտակցութիւնն:

Որչափ էլ երկրաւոր որ լինի մարդոց մեծ մասի կեանքը բայց և այնպէս միշտ նորա սրտից մի ուրիշ բան է գուրս գալի ու խօսում: որ երկրաւոր չէ, ու միայն այս աշխարհիս չէ պատկանում: Ամենաթեթևամիտ մարդն էլ՝ կորած մոլորած անառակ մարդն անգամ ունի բոպեներ, որոնց մէջ իւր լուրջ մոածմունքն իրան յաղթում են: Օրուան մէջ ունեցած աշխատութիւնից ու չարչարանքից առանձնանում է նա, մէկ կողմքաշվում ու ազօթք անում: Ամեն օրուան կեանքի խառնաշփոթ ձայների մէջից փառաւոր կերպով հնչում են կարծեսթէ երկինքից են ցածումը երկրիս վերայ լսվում կիրակի օրուան զանգակակների ձայները: Զանգակների այս ձայնը յորդո-

րում է մեզ իրանց հնչիւնովը և տրամադրում է մեզ մեր սրտավն ու հոգւով գէպի վերինը՝ գէպի հոգեսրը վերապահնաղ. այս ձայնը հրաւիրում է մեզ պաշտելու երկրպագելու. գերագոյն Էակին. Խնչպէս որ արեմտեան քրիստոնեայ երկիրներում օդի մէջ հնչում են ու տարածւում անհամար եկեղեցիների զանգակների ձայնները. այնպէս էլ արեւելեան երկիրներում՝ մղկիթների աշապատիների լուռում է ձայնն իմամի, որ հրաւիրում է մարդոց մաքով գէպի երկինք՝ գէպի հոգեսրը վերանալ՝ և յորդորում է երկրպագելու գերագոյն Էակին: Այսպէս, կրկնումեմ: արեւելեան քրիստոնեայ երկիրներումն օգբ լցւում է անթիւ եկեղեցիների զանգակահարութեան ձայներով, իսկ արեւելեան երկիրներումն մղկիթների աշտարակներից գէպի ցած հնչում իմամի ձայնը, որ հրաւիրում է հաւատացեալներին ջերմեռանդ աղօթքի, ու հազարաւոր մահմետականեր երեսները շուռ են տալի գէպի արեւելք, տղօթքներ մըմնջելով՝ և իրանց գլուխն խոնարհեցը նումեն գէպի երկիր նսքան առաջն, որոյ առաջ ամեն բան գետնի հոդ է: Հրէից ժողովարաններն Եհովայի փառարտնութեան ձայներն են հնչեցնում: Արարիայի անապատներով գնում են ջոկ ջոկ խմբեր ուխտաւորների գէպի իրանց մարդարէի գերեզմանը: Հնդկաստանցին ծունը է դնում գանգէս իւր սուրբ գետի ափում: Պարսիկը բլուրների գագաթներն է բարձրանում: Որ կեանքի խառնաշփոթ ձայներիցը հեռու տեղ աղօթք անի կեանքի սկզբնական աղբիւրին, և իւր ձեռքերը բարձրացնի գէպի աստղերն, որ աներեւոյթ Աստուծոյ յայտարարներն են: Լայնարձակ արօտատեղերում թափառող հովուական ազգերի պարզ՝ անզարդ սեղանների վերայ բարձրանում է զոհ անողների կրակի ծուխն, որ սիւների նման գէպի երկինքն է բարձրանում: Վայրենին ընկնում է իւր կուռքի առաջ և աղօթք է անում գերագոյն Հոգւոյն:

Մարդկային ազգի շատ վսեմ բանն այս է: Ամեն տեղ հոգեսր բանն՝ ծագող արեգակի նման՝ ընկնում է մարմնաւորի վերայ ու լուսաւորում, և մարդուո խուլ՝ անասնական՝ բնական բերման վերայ աղդում ու ներշնչում սուրբ բաղձանք, որ հետեւն հոգիների համար անմոհ բանին: Ամեն ազգ ունի իւր աղօթքն, ամեն մարդիկ ունին իրանց կրօնն. աշխարհիս ամեն

գօտիների մէջ, ամեն դարերում աղօթք է անում մարդկային ազգն, և աղօթք է արել Սողոմոնի իմաստունի հոգւովն, որ առ սուրէ թէ՛ Քէղ ճանալւն Աստվածածն՝ կատացէալ արդարութիւն է, և ու զբանիւնու իմանալն՝ յառ-իտէնախան կեանուի արձար է: Ինչու որ պն ժամանակն է մարդս ճշմարտապէս մարդ՝ և անասուններից գերազանց, երբ որ նա Աստուած է ճանաչում: և որչափ որ աւելի է ճանաչում Աստուածոյ զօրութիւնն ու մեծութիւնը, նոյն չափ աւելի սրբանումէ նորա հոգին, և նոյնչափ աւելի խոր արմատ բռնում ու հաստատվում յաւիտենական կեանքի մէջ:

Բայց եթէ մի կողմից տեսնումեմ, որ բոլոր բանաւոր արարածների մէջ զգացմունք ու հաւատ կայ դէպի կենդանի Աստուածը՝ միւո կողմից հազար ու մի տեսակ գաղափարներն Աստուածութեան մասին ու կրօների նոյնչափ մեծ զանազանութիւններն մեծատարած երկրիս վրայ ինձ զարմացնումն: Քիչ ազգեր կան, որ մի ևնոյն կրօնն ունենան: Հազար երկու հարիւր միլիոնից աւելի երկրիս վրայ ապրող մարդկանցից՝ երեք հարիւր միլիոնի մօտ մարդիկ՝ Քրիստոնէական հաւատն են պաշտում: Մովսէս Մարդարէի օրէնքն դաւանողները գրեթէ վեց միլիոն են: Մահմետի սւսման հետեւղներն, որ տարածուած են Ասիայում, Աֆրիկայում և Եւրոպական Տաճկաստանում, հաշվում են հարիւր ու վաթսուն միլիոն: Միւս ասիական ազգերը Բուդդայի և Բրահմայի պաշտօղներն են՝ թուով վեց հարիւր միլիոնից աւելի: Հեթանոս ազգերի և ցեղերի բազմութիւնն, որոնք որ բնակվում են այժմ էլ Աֆրիկայի, Ասիայի, Ամերիկայի և Եւստրալիայի ընդարձակ սահմաններում, երկու հարիւր միլիոն են հաշվում:

Հեթանսական կրօնների շատ և շատ տեսակները մեզ գեռ ևս յայտնի չեն՝ կամ այն պատճառով, որ շատ քիչ է պատահել, որ հետաքրնին ճանապարհորդներն ամենաճիշտ կերպով նորանց բնակած տեղերը մոտած լինին, կամ թէ նոցա լեզուները գեռ ևս շատ անծանօթ են մեզ: Նատերի մասին գիտենք, որ նոքա աստղերի են երկրպագում: ուրիշների մասին գիտենք, որ նոքա պաշտում են կրակ ու նորա զօրութիւնը, կամ մարդու խելքից դուրս՝ հրաշալի կենդանիներ ու բոյսեր, կամ իրանց ձեռքով շինած կուռքեր: Բայց թէ նոքա աստղերը,

բոյսը, կենդանին ու ձեռքով շինած կուռքի պատկերը կենդանի Աստուծոյ տեղ են պաշտում, կամ թէ՝ այդ խորհրդաւոր նշանների տակ Աստուծոյ զօրութիւնն են պաշտում, այդ գժուար է իմանալ: Անկասկած, ինչպէս մեր, այնպէս էլ աշխարհիս ամեն ուրիշ ազգերի մէջ կան մտաւոր կարողութեան ու գաղափարների բարձր և ստոր այլ և այլ աստիճաններ:

Եւ ինչի՞ց ցն է մարդոց գերագոյն էակի վրայ ունեցած գողափարների այս մեծ տարբերութիւնը այն էակի վերայ, որին որ ամենքն էլ պտուում են ու ամենքն էլ պաշտում, թէև այլ և այլ կերպով: Ինչո՞ւ այսքան տեսակ տեսակ կրօններ պիտի լինին աշխարհիս մէջ:

Այ հողից ծնած ու հող դառնալու մահկանացու մարդ, ի՞նչ հաշիւ ես պահանջում քո Ստեղծողից, դու, որ նորա ստեղծածն ես: Այս զանազանութիւնը նորա տուրբ կտմքն էր, որ լինի: Մի գուցէ կասկածես, որ մի բան առանց նորա կալքին գոյութիւն ունի: Եթէ նա կամեցած լինէր, վսեմ և բարերար նպատակներն իւր դիտաւորութեան մէջ կային, թէև այն նպատակները քո սահմանաւոր խելքդ քննել չէ կարող: Ամէն տեղ և ամէն իւր արարածների մէջ երեսոյթների անվերջ բազմազանութիւն պիտի լինի: այս է Աստուծոյ պատուիրանն: Եւ յիրաւի՝ որպիսի և որքան զանազանութիւն ենք տեսնում երկնային մեծ մարմինների, քարերի, բոյսերի, կենդանիների ու մարդոց ունեցած գոյների, կերպարանքների և յատկութիւնների մեծ երկրիս վրայ բնակող անհամար մարդոց մէջ էլ: Ինչ տարրերութիւն, որ կայ այս ամեն արարածների մէջ՝ թէ կերպարանքի, ձեւի ու գծագրութեան և թէ բնաւորութեան և ունեցած յատկութեանց ու մտաւոր կարողութիւնների կողմանէ, միթէ այդ ամեն բազմութիւնը պէտք չէ՞ր որ լինի աշխարհում:

Երբոր մտածում եմ, որ մինչև անգամ ամեն մի մարդ իւր կրօնական գաղափարների և զգացմունքների մէջ միշտ մի և նոյնը չէ մնում երբէք՝ ու մնալ էլ չէ կարող, այլ միշտ փոխվումէ երբոր մտածում եմ, որ ես՝ իբրև երեխայ՝ ինձ սովորեցրած հաւատավով և ստացած ուղղութիւնով՝ բոլորովին ուրիշ կերպ էի մտածում ու զգում, քան թէ յետոյ, երբ որ պատանեկութեան հասակիս հասայ, որ ես շատ փորձերով՝ այ-

րուկան հասակում ունեցած մանկական ու պատանեկութեան կրօնի գաղափարներս շատ փոխեցի, որ ես իմ ծերութեան օրերում՝ շատ ուրիշների հետ՝ Աստուածային բաների վերայ ունեցած գաղափարս պայծառացնում եմ՝ անշուշտ շատ քը պիտի զարմանամ, որ երկրագնդիս վրայ ապրող մարդոց շատ տեսակ կրօններ կան:

Այս էլ ասեմ և պէտք է ասեմ, երբոր միենոյն ժամանակ մտածում եմ թէ՝ ինչ ազգեցութիւն սամի աշխարհագրական գոտիների զանազան լինելը տաք և սառն կլիմաների մէջ եղած երկիրների ունոցաբոյսերի, կենդանիների և մարդոց բնութիւնների վերայ. երբոր մտածում եմ թէ՝ ինչպէս խոժոռադէմ գաժան ու կոպիտ է մահկանացուն այն երկիրներում, որ գրտնը ըստում են յաւիտենական ձիւների մօս, և լնդ հակառակն ինչպէս տոփարիւն է երկրիս տաք գոտիում բնակվող մարդն. և ինչպէս, կարծես, պէտք է անպատճառ ուրիշ ուրիշ կերպ լինին բնաւորութիւնները, հակումները, կրքերը՝ պարզ բան է, որ ասում եմ ինքս ինձ, թէ կրօնի տեսակները միշտ աշխարհիս վերայ տարբեր պէտք է մնան, թէև ամեն տեղ մարդո միւնոյն հոգւոյ ուղղութիւնն ունենայ գէպի Աստուած յաւիտենական, կեանքն ու առաքինութիւն:

Եւրոպայի աւելի հիւսիսային կողմերում, ուր որ մարդո իւր անունդի պտուղներն տմիսներով սառոյցով պատած հողից աւելի մեծ աշխատութիւնով պիտի ձեռք բերի, ուր որ իւր գոյութիւնը պիտի պահպանի, անդադար պատերազմելով տարերքի հետ, ինքն էլ աւելի մտածով, աւելի լրջամիտ ու աւելի հնարագէտ է: Իւր արիւնը, կարծես, աւելի սառն է. իւլքն աւելի զօրացած է, երևակայական կարողութիւնն աւելի աշխայի չունի. մինչեւ անգամ շատ ժամանակ տխուր ու մթագնած է, ինչպէս որ է իւր ամպամած երկինքն: Իւր կրօնն էլ անսեթեթ է. կրօնի մէջ նորան նորոգում է աւելի միտքը՝ քան թէ մտքի պատկերը: Նորա եկեղեցիները պարզ են և անպանոյն, ինչպէս որ է իւր բնակած տեղն՝ տարւոյ շատ մեծ մաօք: Նա միրում է մոքի ազատութիւնը: Սորա համար իւր թագաւորներն անգամ՝ գրեթէ՝ ամեն տեղ օրէնքներով ու մարդոց որոշ գասակարգերով սահմանաւորուած են: Եկեղեցւոյ մէջն էլ նսքի ու զում ճաշաչել ամենամեծ քահանայ և ոչ մի կապ գնող

իրաւասութիւն։ Ո՞վ է նորան այսպէս փօխում։ Աւելի տաք երկիրներում՝ Խոռալիայում, Սպանիայում, Հարաւային Գաղղիայում, Յունաստանում՝ մարդիկը տաքարիւն, կրակոտ են, նորանց երեւակայութիւնը աւելի վառ է ու զօրաւոր։ Անամակ՝ հաճելի երկինքը, տեսակ ահսակ գարդով զարդարուած երկիրը, պայծառ գոյները ծաղիկների ու թուչունների, ամենայն բան՝ բնութեան մէջ աւելի զօրաւոր կերպով է ներգործում արտաքին զգացմանց վերայ։ Սառը դատողութիւնը հիւսիսային բնակչի, նորա պարզ, անծէս ժամասացութիւնն երկրի հարաւային կողմի բնակչի համար գոհացուցիչ է։ Հարաւային երկիրների բնակիչն իւր վառ երեւակայութիւնով զարդարում է իւր հաւատը պատկերներով, ինչպէս որ իւր եկեղեցին էլ ունի իւր արտաքին ամեն շքեղութիւնն և ամեն տեսակ փառաշեղութիւնն։ Զգացմանց վերայ աւելի ներգործող ու աւելի ճոխ կերպով պատրաստվում է իւր եկեղեցին տօնի ժամանակ՝ տօնի համար, բաւական է իւր զգացմանց մէջ մինչև անգամ աւելի հակամէտ է փախչելու անապատներ, որ մեռցնի իւր մարմինն, ինքն իրան տանջանքներ տայ Աստուծոյ սիրոյն համար։ Իւր զգացմունքների, հաճոյքի կողմանէ միենոյն չէ երբէք, երբեմն անսանձ ու կատաղի է, իսկ երբեմն ծառայ և գերի։ Նա իւր թագաւորների մէջ տեսնում է։ Աստուծանից օծուած հրամանատարներ, և իւր եկեղեցւոյ գլխաւորների մէջ՝ երկնաւորի նուիրական թարգմանները։ Ո՞վ է նորա բնութիւնն՝ այսպէս յեղափոխողն։

Հենց այս ամեն պատճառուներից պէտք էր, որ քրիստոնէական կրօնի և հրապարակական աստուածպաշտութեան կերպի մէջ մեծ տարբերութիւն առաջ գար։ Մեր բնական երկրի հիւսիսային տէրութիւնների մէջ իշխող է պարզ, աւելի մարդուս խելքին համապատասխան՝ անզարդ աստուածպաշտութիւնը լուտերականների, կալուինականների և ցվենգլիսկանների։ իսկ հարաւային երկիրներում իշխում է մեծ վայելչութեամբ և մարդկային ամենայն զգացմունքներն երջանկացնող կաթոլիկ եկեղեցին։ Այստեղ կայ միութիւն և միապետութիւն հաւատոյ։ այնտեղ մոքի ազատութեան պատուղը՝ բաժան բաժան շատ առանձին գաւանական խմբեր, որոնք որ ոչ ոքին իրանց վրայ իշխող ճանաչել չէին ցանկանալ, այլ միայն իրանց խելքն

## ու իրանց Աստուածն:

Մարդկային տգիտութեան և քրտութեան տիրալի ապացոյց  
էս որ այս՝ այն դաւանութեան հետեղները միմեանց ատում  
են, ինչ է որ կրօնական գաղափարների մէջ իրավից տարբեր են:  
Ինչպէս որ կարելի չէ, որ երբ և իցէ մարդիկ միւնոյն լեզուն  
ունենան, միւնոյն հագուստը, միւնոյն տեսակ կենցաղավա-  
րութիւնն, այնպէս էլ կարելի չէ որ և իցէ աշխարհիս վերայ  
մի՛ և ոչ այլ և այլ եկեղեցւոյ՝ կամ դաւանութեան հետեղնե-  
րը գտնուին նաև այն ժամանակ, երբոր մի օր ամեն ծունը պի-  
տի կրկնի Յիսուս Քրիստոսի անուան և Յիսուսի մարդկային ազ-  
գին տուած հաւատոյ ուսումն վերջապէս ամեն մահկանացու-  
ներին պիտի երջանկացնի: Սորա համար հեռու լինի ինձանից  
ատելը՝ կամ հայհայելը այն մարդոց, որոնք որ իմ հաւատիցս  
չեն: Հեռու լինի ինձանից նզովելը քրիստոնեաներին, որ այլ  
և այլ եկեղեցքների են պատկանում: — Ամենքն էլ, ամենքն  
էլ Քրիստոսով են փրկուած, որոնք որ Աստուածանից երկիւղ  
ունին և իւր պատուիրանները պահում են: Ոչ թէ նոցա ար-  
տաքին ծէսն ու արարողութիւնն, ոչ թէ նոցա ունեցած հա-  
մոզումն, այլ ինչպէս Փրկիչն ասում է « այս է յաւիահնական  
կեանքն, որ ճանաչեն քեզ միայն ճշմարիտ Աստուած և որին  
որ Դու զրկեցիր Յիսուս Քրիստոսին:

Р-М-Ф. Г. В. И.